



# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ 2025-2030ԹԹ

---

*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՓՈՒՆՔ ԳՅՈՒՂԻ  
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ*

*Տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդ՝  
Նելա Վլադիմիրի Վարդանյան*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>ՆԱԽԱԲԱՆ.....</i>	<i>3</i>
<i>Տեղեկություններ դպրոցի մասին.....</i>	<i>6</i>
<i>ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.....</i>	<i>13</i>
1. <i>Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքները.....</i>	<i>13</i>
2. <i>Հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքները.....</i>	<i>20</i>
3. <i>Համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ հաստատության համագործակցության ուժեղ և թույլ կողմերը.....</i>	<i>24</i>
4. <i>Հաստատության խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերը.....</i>	<i>29</i>
5. <i>Հաստատության շենքային պայմանների նպատակային գործառնությունը ուժեղ կողմերը և թերությունները.....</i>	<i>33</i>
<i>ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ.....</i>	<i>36</i>
<i>ՆՊԱՏԱԿ 1. Կրթության որակի բարելավում.....</i>	<i>36</i>
<i>ՆՊԱՏԱԿ 2. Մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացմանն ուղղված գործողությունների իրականացում.....</i>	<i>45</i>
<i>ՆՊԱՏԱԿ 3. Համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ հաստատության համագործակցության խթանում.....</i>	<i>49</i>
<i>ՆՊԱՏԱԿ 4. Հաստատության խորհրդակցական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացում.....</i>	<i>53</i>
<i>ՆՊԱՏԱԿ 5. Հաստատության շենքային պայմանների բարելավում, նյութատեխնիկական բազայի համայրում.....</i>	<i>58</i>
5. <i>ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ.....</i>	<i>61</i>
<i>ՀՂՈՒՄՆԵՐ.....</i>	<i>65</i>
<i>ՀԱՎԵԼ ՎԱԾՆԵՐ.....</i>	<i>66</i>

## ՆԱԽԱԲԱՆ

Մարդկության առաջընթացն ապահովող հիմնական գործոնը կրթությունն է: Պետության լինելիության հենասյունն ու լավ ապագա կերտելու կարևորագույն գործիքը դպրոցը, ուստի պետության և հասարակության գլխավոր առաքելությունն է հոգ տանել դպրոցի զարգացման, առաջընթացի և բարեկարգման համար: Այսօրվա հանրակրթական համակարգը թևակոխել է մի կարևոր շրջափուլ, այն է ունենալ զարգացող, հարմարավետ, բարեկարգ, գեղեցիկ դպրոց, նորարար և ստեղծարար ուսուցիչ, կրթության արժեքն իմացող և մտածող սովորող: Այժմ պետական մակարդակով իրականացվում են կրթական բարեփոխումներ, որոնց առանցքում ուսուցման մեթոդների, կրթության բովանդակության, ուսուցիչների մասնագիտական ու մեթոդական որակների արդիականացումն ու համապատասխանեցումն է միջազգային կրթական միտումներին: Կրթական բարեփոխումները ժամանակատար գործընթաց է, որին հասնելու համար ուսումնական հաստատության մանկավարժական հանրույթից պահանջվում է լուրջ և նպատակաուղղված աշխատանք և ժամանակ, իսկ նոր ներդրված հանրակրթության պետական չափորոշիչը/ՀՊԶ/ հնարավորություն է ստեղծում լուծելու առկա խնդիրները, կոտրելու կարծրատիպերը, պայմաններ ստեղծելու հետագա զարգացման համար: Սովորողների հիմնական մասը չունի սովորելու մոտիվացիա, հոգնել են ավանդական մեթոդներից և պասիվ լսողի իր դերից, ցանկանում են սովորել մտածելով, կողմնորոշվելով, հետազոտելով, նախագծելով: Վերը թվարկած հարցադրումները և դրանց իրական պատասխաններն են դրված սույն զարգացման ծրագրի առանցքում՝ առաջարկելով կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ, իրագործելի, չափելի առարկայական լուծումներ, որոնք վերաբերվում են կրթական գործընթացի բոլոր մասնակիցներին և շահառու խմբերին: Պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզորացման գուրծում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը:

Ժողովրդավար Հայաստանում կրթությունն պետք է լինի հասնելի ներառական, մասնակցային, աջակցող, բարեվարք, բարեկամական և հավասար: Վերջին տարներին պետության կողմից մեծ ֆինանսավորում ստացած այս ոլորտը պետք է կարողանա առավելագույն արդյունքներ գրանցել: Մեր երկրում կրթությունը և դաստիարակությունը գերակայություններ են, ազգային արժեք, սոցիալական և տնտեսական առաջընթացի կանոն գործոն:

Զարգացման ծրագիրը մշակելիս հիմք է ընդունվել դպրոցի առաջնային կարիքները, կրթության որակին խոչընդոտող հանգամանքները, հաստատության մանկավարժական համակարգի, ծնողների և սովորողների մտահոգությունները, առաջարկությունները, ուսումնասիրվել են վերջին մի քանի տարիների դպրոցի ներքին գնահատման ցուցանիշները որպեսզի կարողանանք սահմանել հստակ նպատակներ դրանցից բխող խնդիրները չլինեն երևակայական, ժամկետները լինեն իրատեսական իսկ արդյունքները կանխատեսելի և չափելի:

*Ջարգացման ծրագրի համար հիմք են հանդիսացել հետևյալ նորմատիվ իրավական ակտերի պահանջները.*

- ❖ ՀՀ Սահմանադրություն
- ❖ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք
- ❖ «Կրթության մասին» ՀՀ օրենք
- ❖ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- ❖ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք
- ❖ Աշխատանքային օրենսգիրք
- ❖ Դպրոցի կանոնադրություն
- ❖ ՀՀ կրթության զարգացման մինչև 2030 թվականների պետական ծրագիր
- ❖ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք
- ❖ Հանրակրթության պետական չափորոշի ձևավորման և հաստատման կարգ
- ❖ «Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեյի միջոցների ֆինանսավորման կարգը, պետական բյուջեյով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 22-ի N 1481-Ն որոշում
- ❖ «Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեյի միջոցների ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի N 79-Ն հրաման
- ❖ Կրթության ոլորտը կարգավորող այլ օրենսդրական իրավական ակտեր, որոշումներ հրամաններ, կարգեր

Հիմք ընդունելով մեր կողմից անցկացված հանդիպումները, կատարված մշտադիտարկումները, ներքին գնահատման հաշվետվությունների ուսումնասիրությունները, ծանոթ լինելով վերը թվարկված իրավական հիմքերին, դպրոցի օրինակելի կանոնադրությանը մշակվել է «ՀՀ Գեղարքունիքի մարզի Արփունքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2025-2030 թվականների զարգացման ծրագիրը:

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը իր մեջ ներառում է՝

- ❖ Հաստատության ձեռքբերումների, հիմնախնդիրների ներկայացում, առկա իրավիճակի վերլուծություն:
- ❖ Դպրոցի ոլորտային զարգացման հեռանկարները:
- ❖ Սովորողների կրթության, դաստիարակության ու զարգացման գերակա նպատակները, խնդիրները, դրանց իրականացման ժամկետները, պատասխանատուները:
- ❖ Խնդիրների լուծման ընթացքում հնարավոր ռիսկերն ու դրանց չեզոքացմանը, մեղմանն ուղղված քայլերն ու միջոցները:

- ❖ Մանկավարժական գործընթացի և նորարական բարեփոխումների իրականացման մեթոդաբանությունը:
- ❖ Աշխատանքների կատարման գնահատման չափանիշները, վերահսկողության մեխանիզմները:

## *Տեղեկություններ դպրոցի մասին*

Դպրոցը կառուցվել է 1956 թվականին՝ որպես աղբբեջանական միջնակարգ դպրոց, 1989 թվականին վերակազմավորվել է որպես հայկական հանրակրթական դպրոց: Դպրոցը գտնվում է բարձրլեռնային, սահմանամերձ, սակավ բնակեցված գյուղական բնակավայրում, որի պատճառով էլ աշակերտների թիվը փոքր է: Դպրոցի շենքը երկհարկանի է, հարմարեցված, շենքի նախագծային հզորությունը նախատեսված է 180 սովորողի համար: Դպրոցին կից տարածքի մակերեսը 7100մ2 է: Դպրոցը ունի զենքի և սննդի պահեստ, 10 դասասենյակներ, մեկ ուսուցչանոց, մեկ համակարգչային սենյակ: Դպրոցում գործում է նախակրթարան: 2021թ. կառավարության միջոցներով վերանորոգվել և կահավորվել է դպրոցի խոհանոցը և ճաշարանը: Քանի որ դպրոցը տիպային չէ՝ չկան հավելյալ աշխատասենյակներ: Պատուհանները փոխված են: Դպրոցը չունի ապաստարան: Մշակված և տեսանելի վայրերում փակցված են սովորողների և անձնակազմի տարահանման պլան: Դպրոցը ունի դեպի դուրս բացվող պահուստային մեկ ելք: Ապահովված է հակահրդեհային վահանակով և կրակմարիչներով: Դպրոցը ունի կենտրոնացված ջեռուցման համակարգ/ջեռուցվում է քարածուխով/Վթարային վիճակում է գտնվում դպրոցի տանիքը:

Դպրոցը ներառված է ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ հաստատված «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերանորոգվող 300 դպրոցներ»-ի ծրագրում: Նախատեսվում է, որ 2026 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ դպրոցը կվերակազմավորվի կրթահամալիրի և կունենա նորակառույց շենք բոլոր հարմարություններով ու անհրաժեշտ պայմաններով՝ 144 նախագծային հզորությամբ, 40 մանկապարտեզի նախագծային հզորությամբ:

Մինչև 2023 թվականի սեպտեմբերը դպրոցը ֆինանսավորվում էր աշակերտի թվով, սակայն վերջին տարիներին՝ 2020թվականից հետո, աշակերտների թիվը զգալի նվազեց: Չնայած ֆինանսական միջոցների սղությանը՝ նախորդ հինգ տարիներին կատարվել են բազմաթիվ աշխատանքներ՝ շենքային պայմանների բարելավման, գույքի համալրման, կրթական գործունեության հնարավորինս պատշաճ կազմակերպման համար: Այդ աշխատանքները կատարվել են պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և հասարակական կազմակերպությունների համագործակցության շնորհիվ: Կնշեմ այդ համագործակցություններից մի քանիսը.

## *Զինիշյան հիշատակի հիմնադրամ*

- ❖ Ամբողջությամբ փոխվել են դպրոցի պատուհանները.
- ❖ Վերանորոգվել է հանդիսությունների սրահը և համալրվել աթոռներով
- ❖ Բարեկարգվել է մարզահրապարակը և համալրվել ֆուտբոլի դարպասներով, աղբաններով.

- ❖ Ջինիշյան հիշատակի հիմնադրամի և կառավարության համաֆինանսավորմամբ դպրոցում ներդրվել է կոշտ վառելիքով /քարածուխով/ կենտրոնացված ջեռուցման համակարգ /մինչ այդ դպրոցը ջեռուցվում էր վառարաններով, դիզվառելիքով/:

### *«Վորլդ Վիժն» կազմակերպություն*

- ❖ վերանորոգվել և գույքով համալրվել է խաղահրապարակը
- ❖ փոխվել են չորս դասասենյակների դռներ
- ❖ դպրոցին տրամադրվել է արևային ջրատաքացուցիչ 300լ տարողությամբ
- ❖ դպրոցում գործել են երկարօրյա խմբակներ
- ❖ կազմակերպվել են սեմինարներ՝ բուլինգի մասին, ազգային և եկեղեցական տոներին նվիրված
- ❖ մեդիագրագիտության դասընթաց՝ «Նավակ» երեխայի և ընտանիքի զարգացման Վարդենիսի համայնքային կենտրոն <sup>1</sup>
- ❖ մասնագիտական կողմնորոշման դասընթաց
- ❖ կազմակերպվել են ամառային ճամբարներ
- ❖ Դպրոցի ճաշարանի սպասքի համալում <sup>2</sup>

### *Ճանապարհային անտանգության ազգային խորհուրդ*

- ❖ «Անվտանգությունը քո ձեռքերում» արցանց դասընթաց <sup>3</sup>

### *ՅՈՒՆԻՍԵՖ և ԱՌՆԱՊ հիմնադրամ*

- ❖ «Աղետներին արձագանքում և առաջին օգնություն» թեմայով 8-ժամյա դասընթաց
- ❖ Դպրոցի աղետների ռիսկերի կառավարման /ԱՌԿ/ պլանի ստեղծում

---

<sup>1</sup> <https://fb.watch/rYu7-1RShA/>

<sup>2</sup> [https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=pfbid0kCR4bgLniXbCPjegN6rKbuxWfk9vtqyhbsnCdxTDd68j5GFYsDoUDmP1unn8wowbl&id=100067117291363](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0kCR4bgLniXbCPjegN6rKbuxWfk9vtqyhbsnCdxTDd68j5GFYsDoUDmP1unn8wowbl&id=100067117291363)

<sup>3</sup> [https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=pfbid037bhN5ym38eQYPP5RVNPJ5BSLrdJQ5AL4srcEtRZKaEjLYhFDy3GhkHZNpzQr5aHZI&id=100067117291363](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid037bhN5ym38eQYPP5RVNPJ5BSLrdJQ5AL4srcEtRZKaEjLYhFDy3GhkHZNpzQr5aHZI&id=100067117291363)

- ❖ Դպրոցին տրամադրվել է բարձրախոս /ռուպեռ/, առաջին բուժօգնության պայուսակ պարագաներով, կրակմարիչներ, հրշեջ ծածկոց, հրդեհաշիջման վահանակի պարագաներ, տարահանման պայմանական նշաններ
- ❖ Երիտասարդները հանուն կլիմայական բարեփոխումների շրջանակում իրականացվել է նախագծային աշխատանք՝ «Կանաչ բուսականություն, պարարտ հող, վիտամիններով հագեցած բերք՝ հանուն առողջ ու երջանիկ հասարակության»:<sup>4</sup>

### Հայաստանի Աստվածաշնչային Ընկերություն

- ❖ Հանդիպում և Սուրբ գրքի պատմությունների քննարկում <sup>5</sup>
- ❖ Դպրոցը մասնակցել է հայոց եկեղեցու պատմություն /ՀԵՊ/ առարկայից Վիկտորինայի մրցույթին և ճանաչվել հաղթող <sup>6</sup>

### «Արփունք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տվյալները.

<i>Դպրոցի լրիվ անվանումը</i>	<b>«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արփունք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ</b>
<i>Դպրոցի շենքի հիմնադրումը</i>	<b>1956թ.</b>
<i>Տվյալ շենքում տեղակայման տարեթիվը</i>	<b>1989թ.</b>
<i>Ենթակայությունը</i>	<b>Մարզային</b>
<i>Հասցեն</i>	<b>Մարզ Գեղարքունիք, համայնք Արփունք 1/1 փողոց 1</b>
<i>Էլեկտրոնային հասցեն</i>	<b><a href="mailto:arpunq@schools.am">arpunq@schools.am</a></b>
<i>Բնտերնետային կայքի հասցեն</i>	<b><a href="https://arpunq.schoolsite.am/">https://arpunq.schoolsite.am/</a></b>
<i>Փոստային դասիչը</i>	<b>1620</b>
<i>Սոցիալական հարթակ</i>	<b><a href="https://www.facebook.com/profile.php?id=100067117291363">https://www.facebook.com/profile.php?id=100067117291363</a></b>
<i>ՀՎՀՀ</i>	<b>08802932</b>
<i>Կանոնադրությունը</i>	<b>Հաստատվել է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2017թ. հոկտեմբերի 30-ի N 272-Ս և 2020թ.</b>

<sup>4</sup>[https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=pfbid0r1z2r8EAJjtKjhMSidPhYpvkAuSFo7RdbTrBYmFFu3kQZi7Hvd279amBk6YmEgTWI&id=100067117291363](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0r1z2r8EAJjtKjhMSidPhYpvkAuSFo7RdbTrBYmFFu3kQZi7Hvd279amBk6YmEgTWI&id=100067117291363)

<sup>5</sup><https://www.facebook.com/rihana.rihana.165/posts/pfbid02KuGzoS6cXrBS1B3rqcxuARbhgHf8o4p2qtELtSP4NVn3cafE7vFup1mYUmfvjatPI>

<sup>6</sup><https://www.facebook.com/TheBibleSocietyofArmenia/posts/pfbid0fudna14Btg9txJMckqthw8YTra2nygFvhcHeip3MWE452Y2zZE7kjcGTXufYVVGbSI>



<p><i>Պետական ռեզիստրում գրանցման համարը, ամսաթիվը</i>  <i>Շենքի տեսակը, մակերեսը</i>  <i>Նկուղ-ապաստարան, մակերեսը</i>  <i>Հերթայնությունը</i>  <i>Հարկայնությունը</i>  <i>Տիպը՝ ըստ իրականացվող հիմնական ծրագրերի</i>  <i>Տիպը՝ ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի</i></p> <p><i>Լիցենզիաները</i></p> <p><i>Հատկացված սահմանային թիվը/ սովորողների փաստացի թիվը</i></p> <p><i>Աշխատանքային շաբաթվա տևողությունը</i>  <i>Փաստացի հաճախող սովորողների թիվը</i>  <i>ԿԱՊԿՈՒ սովորողների թիվը</i>  <i>Այլազգի սովորողների թիվը</i>  <i>Ուսուցիչների թիվը</i></p>	<p><b>դեկտեմբերի 23-ի N 649-Ա որոշմամբ</b>  <b>58.210.00285, 04.12.2002թ.</b></p> <p><b>Հարմարեցված, 830 մ<sup>2</sup></b>  <b>Առկա չէ</b>  <b>Միահերթ</b>  <b>Մեկ մասնաշենք՝ երկհարկանի</b>  <b>Ընդհանուր</b></p> <p><b>Միջնակարգ՝ ըստ կրթական ծրագրերի /1-12-րդ դասարան/</b>  <b>Նախադպրոցական՝ N 0069, տրված՝ 11.04.2015թ.</b>  <b>Տարրական՝ N 0401, տրված՝ 30.06.2010թ.</b>  <b>Հիմնական՝ N 0394, տրված՝ 30.06.2010թ.</b>  <b>Միջնակարգ՝ N 0323, տրված՝ 30.06.2010թ.</b>  <b>Նախադպրոցական՝ 25/6</b>  <b>Տարրական՝ 24/8</b>  <b>Հիմնական՝ 53/24</b>  <b>Միջնակարգ՝ 22/7</b></p> <p><b>Հնգօրյա</b></p> <p><b>39 /քառասունհինգ/</b></p> <p><b>0 /զրո/</b>  <b>0 /զրո/</b>  <b>18 /տասնյոթ/</b></p>
--	--



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎԿԱՅԱԿԱՆ**  
**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ**  
**ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ**

Սույն վկայականով հաստատվում է «9» Հուլիսի 2014 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

<< ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՓՈՒՔ ԳՅՈՒՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵՆՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, համայնք Արփունք 1/1 փողոց 1

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անհատույց օգտագործման պայմանագիր 01.07. 2014թ. ս/մ 5903

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 05-019-0029-0009

Մակերեսի չափը (հա)՝ 0.71

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

5. ԾԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/ի	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	05-019-0029-0009-001	դպրոց	830 ք.մ.	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
2	05-019-0029-0009-002	ճաշարան	44.5 ք.մ.	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
3	05-019-0029-0009-003	սան հանգույց	3 ք.մ.	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Ֆեոյա Գևորգյան  
 գրադեցրած կաշտոնը՝ Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր  
 ՀՀ ԿՄ՝ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայականը  
 տրամադրող սպասարկման գրասենյակի  
 Կ.Տ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԼԻՑԵՆԶԻԱ**

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0069

Սույնով վավերացվում է, որ

«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՓՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈՍԿ  
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Արփունք  
(գտնվելու վայրը)

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Արփունք  
(գործունեության իրականացման վայրը)

*Իրավունք ունի իրականացնելու*  
**Նախադպրոցական կրթական ծրագիր**

ՆԱԽԱՐԱՐ   
(ստորագրությունը)

Ա. Աշոտյան  
(անունը, ազգանունը)

« 11, » ապրիլի 2015 թ.

Անժամկետ  
(լիցենզիայի գործողության ժամկետը)





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԼԻՑԵՆԶԻԱ**

ՏԱՐՐԱԿԱՆ ընդհանուր՝ 1-ին աստիճան  
(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0401

Սույնով վավերացվում է, որ

«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՓՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈՍԿ  
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

Գեղարքունիքի մարզ, գյուղ Արփունք  
(գտնվելու վայրը)

Գեղարքունիքի մարզ, գյուղ Արփունք  
(գործունեության իրականացման վայրը)

*Իրավունք ունի իրականացնելու*  
**Տարրական** ընդհանուր՝ 1-ին աստիճան  
(ծրագրի անվանումը)

**հանրակրթական ծրագիր**

ՆԱԽԱՐԱՐ   
(ստորագրությունը)

Ա. Աշոտյան  
(անունը, ազգանունը)

« 30, » հունիսի 2010 թ.

Անժամկետ  
(լիցենզիայի գործողության ժամկետը)



  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԼԻՑԵՆԶԻԱ**

ՀԻՄՆԱԿԱՆ \_\_\_\_\_ ընդհանուր՝ 2-րդ աստիճան  
(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ  
ՍԵՐԻԱ Ա \_\_\_\_\_ № 0394

Սույնով վավերացվում է, որ  
«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՓՈՒՆՔ  
ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ  
(կազմակերպության լիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

Գեղարքունիքի մարզ, գյուղ Արփունք  
(գտնվելու վայրը)

Գեղարքունիքի մարզ, գյուղ Արփունք  
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Հիմնական \_\_\_\_\_ ընդհանուր՝ 2-րդ աստիճան  
(ծրագրի անվանումը)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ \_\_\_\_\_ *Ա. Աշոտյան*  
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ. « 30 » հունիսի 2010 թ.  
Անժամկետ  
(լիցենզիայի գործողության ժամկետը)

  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԼԻՑԵՆԶԻԱ**

ՄԻՋՆԱԿԱՐԳ \_\_\_\_\_ ընդհանուր՝ 3-րդ աստիճան  
(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ  
ՍԵՐԻԱ Ա \_\_\_\_\_ № 0323

Սույնով վավերացվում է, որ  
«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՓՈՒՆՔ  
ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ  
(կազմակերպության լիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

Գեղարքունիքի մարզ, գյուղ Արփունք  
(գտնվելու վայրը)

Գեղարքունիքի մարզ, գյուղ Արփունք  
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Միջնակարգ \_\_\_\_\_ ընդհանուր՝ 3-րդ աստիճան  
(ծրագրի անվանումը)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ \_\_\_\_\_ *Ա. Աշոտյան*  
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ. « 30 » հունիսի 2010 թ.  
Անժամկետ  
(լիցենզիայի գործողության ժամկետը)

## *ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ*

### *1. Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքները*

Հանրակրթական ուսումնական հաստատությունները ունեն վերահսկողական մի շարք օղակներ, որոնք մշտադիրտարկումների, ստուգումների արդյունքում արձանագրում են անձնակազմի կողմից թույլ տված հնարավոր թերացումներն ու բացթողումները, որոնք էլ իրենց հերթին ուղիղ ազդում են կրթության որակի վրա: Յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում իրականացվում է ներդպրոցական վերահսկողություն՝ ձեռք բերելու աշակերտների առաջադիմության մակարդակի, ուսուցիչների կողմից մասնագիտական պարատարությունների կատարման, բարոյահոգեբանական միջավայրի և այլ հիմնահարցերի վերաբերյալ տվյալներ՝ դասալսումների, տնօրինության կողմից տրվող գրավոր աշխատանքների, առարկայական մասնախմբերի շրջանակներում կատարվող վերահսկողական աշխատանքի միջոցով: Թվարկված գործառույթների վերահսկողության պատասխանատուն ուսումնական հաստատության տնօրենն է:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների վերահսկողությունն իրականացնում և համակարգում է հաստատության տնօրենի ուսումնական գծով տեղակալը և ներկայացնում է առաջարկություններ ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման ուղղությամբ: Տնօրենի կողմից ներկայացված զարգացման ծրագրի արդյունավետ իրականացման վերահսկողությունը իրականացվում է հաստատության խորհրդի կողմից: Արտաքին վերահսկողություն իրականացնում է կրթության պետական տեսչությունը:

Ուսումնական հաստատությունում կրթադաստիարակչական գործընթացն իրականացվում է՝ հանրակրթական պետական և առարկայական նոոր չափորոշիչների հիման վրա, ուսուցիչների հիմնական մասը օրվա դասի պլանավորումները կազմվում են՝ հիմք ընդունելով պետական և առարկայական չափորոշիչներում ամրագրված սկզբունքները,

նպատակներն ու վերջնարդյունքները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր ՀՊԶ-ով կազմակերպվող ուսումնական գործընթացը հիմնված է սովորողների կարողունակությունների ձևավորման վրա՝ դպրոցում ամեն բան արվում է հենց կարողունակությունների ձևավորման ուղղված դասեր անցկացնելու համար: Մակայն, չենք կարող ասել, որ հաստատություն լիարժեքորեն ներդրված են կրթական բարեփոխումները և իրապես նպաստել են ուսումնադաստիարակչական որակական և քանակական արդյունքների բարելավման վրա: Դա հիմնականում պայմանավորված է տարբեր պատճառներով, որոնք իրենց բացասական ազդեցությունն են ունենում սովորողների՝ ուսուցման նկատմամբ համընդհանուր մոտիվացիայի զարգացման և աշխատունակության խթանման վրա: Դիտարկենք մի քանի առանցքային պատճառներ, որոնք ազդում են կրթության որակի դինամիկայի վրա և պահանջում են հրատապ լուծումներ.


- ❖ Ուսումնանյութական բազայի պակաս
- ❖ Մանկավարժական համակազմի մասնագիտական ցածր որակ և մատվացիայի պակաս
- ❖ Ուսուցման ավանդական մեթոդներին կառչած ուսուցիչներ, ուսուցչակենտրոն դասեր
- ❖ Ուսուցման ժամանակակից մեթոդների, գնահատման ժամանակակից ձևերի, թվային տեխնոլոգիաների նկատմամբ անտարբերություն
- ❖ Սովորողների ինքնուրույնության, ինքնավարության, ակադեմիական ազատության սահմանափակում

Թվարկված հիմնախնդիրների լուծումը իր դրական ազդեցությունը կունենա կրթության որակի բարձրացմանը, կունենանք ժամանակակից, հազեցած և արդյունավետ ուսումնական միջավայր:

Ստորև ներկայացված գծապատկերում երևում է սովորողների թիվը անցած երեք տարիների կտրվածքով

<i>ՏՎՅԱԼՆԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԱԽՈՂԴ ԵՐԵՔ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ</i>				
<b>Ցուցանիշը</b>	<b>2021-2022 ուստարի</b>	<b>2022-2023 ուստարի</b>	<b>2023-2024 ուստարի</b>	<b>Փոփոխությունները</b>


Սովորողների թիվը ուսումնական տարվա սկզբին	59	49	43	նվազել է
Սովորողների թիվը ուսումնական տարվա վերջին	51	47	43	նվազել է



Գծապատկերով դիտարկենք անցած երեք տարիների առաջադիմությունը

<b>ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ</b>			
Բնութագրիչ	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024
Առաջադիմություն	100%	100%	100%
Որակ	48.2%	47%	45.5%


Տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդ՝ Նելա Վլադիմիրի Վարդանյան



Առաջադիմության մակարդակը անցած երեք տարիների ընթացքում փոփոխության է ենթարկվել սակայն դրական դինամիկա չի արձանագրվել:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ				
	2020-2021	2021-2022	2022-2023	2023-2024
Շրջանավարտների թիվը	4	6	5	2
ԲՈՒՀ ընդունվածների թիվը	1	1	1	0
ՄՍՈՒՀ ընդունվածների թիվը	1	2	4	0





Շրջանավարտների զգալի մասը նախորդ երեք տարներին ուսումը շարունակել են տարբեր ուսումնական հաստատություններում, մնացած մասը զորակոչվել են ծառայելու ՀՀ զինված ուժերում:

Անցյալ երեք տարիների ընթացքում դպրոցի ուսուցիչները բազմաթիվ վերապատրաստումներ են անցել, այդ թվում՝ ՀՊԶ-ների ներդրմանը, սակայն տեսանելի արդյունք չունենք առաջադիմության վերաբերյալ: Սա փաստում է, որ վերապատրաստումների, փորձի փոխանակումների ժամանակ ստացած հմտությունները լավ չեն կիրառվում դասապրոցեսում, նոր մեթոդներով չեն բարձրացնում սովորողների մասնակցելիության ցուցանիշը, գնահատման ժամանակակից ձևերի կիրառմամբ հետադարձ կապ չեն ապահովում, որպեսզի սովորողը հասկանա իր ուժեղ և թույլ կողմերը:

Առարկայական օլիմպիադաների մասնակցության թիվը բավականին պասիվ է, որը նույնպես փաստում է սովորողների մոտիվացիայի պակասի, անինքնավստահության և դժվարությունների մասին: Հաստատությունում գործում են տարբեր խմբակներ, իրականացվում է նախագծային ուսուցում: Մանկավարժների մի մասը դասապրոցեսում կիրառում են ժամանակակից մոտեցումներ, նոր և արդյունավետ մեթոդներ ու մանկավարժական տեխնոլոգիաներ: Շատ կարևոր է նաև ուսուցչի

նախատրամադրվածությունը ինքնուրույն զարգանալուն, ովքեր չեն վախենում նորարարություններից: Այս օրինակով պետք է առաջնորդվեն ուսուցիչները՝ նոր առաջընթացներ գրանցելու համար:

Ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչ է դաստիարակությունը: Հանրակրթական համակարգում կարևորվում է կրթական միջավայրի դաստիարակչական և մարդասիրական խնդիրը, որին զուգահեռ ձևավորվում է բազմակարծիք, ներառական և մասնակցային միջավայրի ձևավորումը: Սովորողը դպրոցում պետք է ստանա լիարժեք դաստիարակություն, ձեռք բերի ազգային և համամարդկային արժեքներ, կարողանա կարծիք և դիրքորոշում հայտնել դրանց վերաբերյալ: Ուսումնական գործընթացի շահառու խմբերի և սովորողների ձայնը պետք է հավասարապես լսելի լինի որպեսզի ձևավորվի հանդուրժողականության և փոխօգնության մթնոլորտ: Այս գործում իր կարևոր առաքելությունն ունի հաստատության տնօրենը, ով պետք է պաշտպանի և հարգի բոլոր շահառուների՝ օրենքով սահմանված իրավունքները: Չնայած դպրոցում չունենք ԿԱՊԿՈՒ աշակերտներ սակայն ներառականությունն ապահովելու համար պետք է կարևորենք ԿԱՊԿՈՒ սովորողների համար ֆիզիկական և հոգեբանական բարենպաստ միջավայրի ապահովման անհրաժեշտությունը: Չունենք ռեսուրս սենյակ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ul style="list-style-type: none"> <li>➤ Ուսուցիչների մեծ մասը դասապրոցեսում կիրառում են էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, ուսուցման ժամանակակից մեթոդներ, անց են կացնում նախագծային աշխատանքներ, ինտեգրված դասեր</li> <li>➤ Մանկավարժական աշխատողների մի մասը օգտվում է առցանց կրթական հարթակներից՝ ԿԶՆԱԿ-ի մեթոդական և ուսումնաօժանդակ նյութերից, ԿՏԱԿ-</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>➤ Տեխնոլոգիաների կիրառմամբ դասերը ունեն բարելավման կարիք                         <ul style="list-style-type: none"> <li>➤ Չունենք էլեկտրոնային գրատախտակներ</li> <li>➤ Մի շարք ուսուցիչներ ունեն դժվարանում են աշխատել ՏՀՏ-ներով</li> </ul> </li> <li>➤ Կան ուսուցիչներ, ովքեր հազվադեպ են կիրառում ուսուցման ժամանակակից մեթոդներ</li> <li>➤ Սովորողների հիմնական մասը չունի</li> </ul>

<p>ի պաշարների շտեմարանից</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ ԲՏ&amp;Մ առարկաների դասապրոցեսում սովորողները դիտում են տեսադասեր             <ul style="list-style-type: none"> <li>➤ Կազմակերպում են ուսումնադաստիարակչական տարբեր ֆիլմերի դիտում</li> <li>➤ Հաճախակի են անցկացվում մեդիագրագիտության դասեր դասղեկի ժամերին</li> <li>➤ Մանկավարժական համակազմը մասնակցում է ներառական կրթության վերապատրաստումներին, սեմինարներին</li> <li>➤ Դպրոցում սովորում են չորս արցախցի երեխաներ որոնց ապահովել ենք դասագրքերով և գրենական պիտույքներով</li> <li>➤ Ուսուցիչները հանդես են գալիս փորձի փոխանակումով</li> <li>➤ Ուսուցիչները կարողանում են օգտվել Teams, lib.armedu.am կրթական կայքերի հնարավորություններից:             <ul style="list-style-type: none"> <li>➤ Մեծ ուշադրություն է դարձվում սովորողների անձնային առանձնահատկություններին, վարքի բացասական դրսևորումներին ինչը կանխվում է բացատրական աշխատանքով, ծնողների հետ համագործակցելով</li> </ul> </li> </ul> </li> </ul>	<p>բավարար մակարդակի ուսումնական մոտիվացիա</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ Կան ուսումնական ժվարություններ ունեցող սովորողներ             <ul style="list-style-type: none"> <li>➤ Աշակերտների կողմից կա ինքնավարության նկատմամբ անտարբերություն</li> </ul> </li> <li>➤ ԿԱՊԿՈՒ սովորողների համար չկան հարմարավետ ուսումնական պայմաններ</li> <li>➤ Ոչ միշտ է հաջողվում ապահովել լիարժեք մասնակցային միջավայր՝ պայմանավորված ուսուցման ավանդական մեթոդներով</li> <li>➤ Համակարգիչների ոչ բավարար քանակը հնարավորություն չի ընձեռնում ինֆորմատիկայի դասերն իրականացնել ըստ պահանջի             <ul style="list-style-type: none"> <li>➤ Գրադարանը թվայնացված չէ</li> </ul> </li> <li>➤ Ինտերնետ կապը առկա է միայն համակարգչային և վարչական սենյակում             <ul style="list-style-type: none"> <li>➤ Փոխադարձ դասալսումների արձանագրություններում ոչ միշտ են նկարագրում իրական պատկերը՝ խուսափելով դիտողություններից</li> </ul> </li> </ul>
--	---

## ***2. Հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքները***

Մանկավարժական աշխատողների ընդհանուր թիվը 18, բոլորն ունեն բարձրագույն կրթություն և անցել են պարտադիր ատեստավորում համապատասխան առարկաններից: Ուսուցիչները տիրապետում են ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատելու հմտություններին և կարողություններին, կիրառում են ՏՀՏ գործիքներ դասապրոցեսում, բոլորը անցել են ՀՊԶ-ի և գնահատման նոր համակարգի վերապատրաստումներ: Դպրոցում աշխատում է առաջին աստիճանի տարակարգ ունեցող և կամավոր ատեստավորում անցած մեկական ուսուցիչ: Դպրոցում տիրում է բարոյահոգեբանական կայուն մթնոլորտ: Ուսուցիչները տիրապետում են հեռահար հարթակներին / Teams, Zoom/ անհրաժեշտության դեքում կիրառում են այդ հարթակները: Մինչև 2023 թվականի սեպտեմբերը ցածր էր ուսուցչական դրույքաչափը: 2023 թվականի սեպտեմբերից ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022թվականի դեկտեմբերի 7-ի «Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին» N 79-Ն հրամանով դպրոցն անցավ դասարան թիվ ֆինանսավորման նոր բանաձևին և այժմ ուսուցչի դրույքը՝ 119808 դրամ է: Հավելավճարների տեսքով դպրոցը օգտվում է ԲՏՀՄ, մինչև 100 աշակերտ լրավճարներից: Դպրոցում ունենք ԼՂ-ից բռնի տեղահանված երկու ռուսուցիչ: Նրանք ընդգրկված են 2023 թվականին ԼՂ-ից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագրում:

Ուսուցիչը պետք է գիտակցաբար մոտենա կրթության բարեփոխումներին, մարտահրավերներին, նորարարություններին, փորձի դրանք կիրառել և հմտանալ, քանզի միայն այդ կերպ կարելի է խոսել ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման մասին: Կանոքում ենք հատկապես տեխնոլոգիաների շարունակական կիրառումը, քանի որ դրանք հազեցնում են դասապրոցեսը, դարձնելով այն ավելի հետաքրքիր և առարկայական: Բազմաթիվ տեխնոլոգիական գործիքներ հեշտացնում են ուսուցչի աշխատանքը: Տեխնոլոգիաներով և ուսուցման ժամանակակից մեթոդներով հազեցած դասերը ուսուցչի

համար կարող են դառնալ արդյունավետ գործիքներ՝ սովորողների շահագրգռելու և մոտիվացնելու համար:

Ներկայիս գնահատման առավել ճկուն գործիքների կիրառումը ուղակի անհրաժեշտություն է, քանի որ գնահատման մեթոդաբանությունը պետք է համապատասխանի ժամանակակից սովորողների կրթական պահանջներին: Սակայն ուսուցիչներից ոմանք չեն կիրառում ձևավորող գնահատման գործիքները, միավորային գնահատման դեպքում էլ՝ ոչ միշտ են հիմնավորում սովորողի ստացած միավորը, իսկ սա նշանակում է որ գնահատումը հիմնավորված և օբյեկտիվ չէ: Այո մանկավարժները թերախում են, աշխատանքում չունեն մոտիվացիա, ոգևորություն, որն էլ իր հերթին բացասական ազդեցություն է ունենում կրթության որակի դինամիկայի վրա:

Մանկավարժական կարևորագույն խնդիրներից է նաև սովորողներին դեպի ուսումնական գործընթացն ուղղելն ու հետաքրքրելը, և միայն կարողունակ, նորարար և ստեղծագործող ուսուցիչը կարող ապահովել չափորոշային վերջնարդյունքներին համապատասխան դասապրոցես: Տնօրինության համար կարևոր է ամենայն պատասխանատվությամբ մոտենալ մանկավարժական համակազմի մասնագիտական ու մեթոդական որակների բարձրացմանը, ապահովելով ուսուցիչներին անհրաժեշտ ռեսուրսներով, տեխնոլոգիաներով և այլ աջակցություններով, որպեսզի դասապրոցեսը չլինի ձևական, այլ լինի արդյունավետ, դինամիկ մասնակցային:

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացման համար շատ կարևոր է ինքնակրթությունը և ինքնազարգացումը: Միայն վերապատրաստումը կամ աստեսավորումը չի կարող լինել արդյունավետ, եթե ուսուցիչը չկրթի ինքն իրեն: Ներկայիս տեխնոլոգիաները լայն հնարավորություններ են բացում ուսուցիչների առջև, որպեսզի նրանք ինքնակրթվեն, ինքնազարգանան, հարստացնեն իրեց գիտելիքների, հմտությունների և կարողությունների բազան, սովորեն և սովորոցնեն, համագործակցեն գործընկերների հետ: Սակայն կան ուսուցիչներ որ դժվարությամբ են ընկալում ներկայիս փոփոխությունները, իրենց թվում էթե իրենք ամեն ինչ գիտեն: Այստեղ ունենք խնդիր աջակցելու ուսուցիչներին ինքնակրթության և ինքնազարգացման հարցերում:

Կրթական համակարգի շարժիչ ուժը մարդկային ռեսուրսն է, որի համար պետք է ապահովել հարմարավետ և մոտիվացնող աշխատանքային մթնոլորտ: Պետք է արժևորել և խրախուսել աշխատակցին՝ ոգևորել, մղել առավել նպատակային աշխատելու: Պետք է ունենալ խրախուսման և արժևորման տարբեր մեխանիզմներ, որոնց գործադրումը կշահագրգռի մանկավարժական աշխատողներին, կնպաստի որակյալ, աջակցող և մասկացային գործընթաց ունենալուն:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ul style="list-style-type: none"> <li>➤ Դպրոցի ուսուցիչները բոլորը ունեն բարձրագույն կրթություն             <ul style="list-style-type: none"> <li>➤ Ուսուցիչների մեծ մասը դասապրոցեսում օգտագործում են ՏՀՏ գործիքներ</li> </ul> </li> <li>➤ Դպրոցում կա մեկ ուսուցիչ առաջին աստիճանի տարակարգով և մեկ ուսուցիչ կամավոր ատեստավորված</li> <li>➤ Ուսուցիչները համագործակցում են միմյանց և հարակից դպրոցների ուսուցիչների հետ</li> <li>➤ Բոլորը անցել են հերթական պարտադիր ատեստավորումը</li> <li>➤ Դպրոցի մանկավարժները անհրաժեշտության դեպքում մասնակցում են տարաբնույթ դասընթացների, որոնք նպատում են ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձրացմանը</li> <li>➤ Դպրոցում կազմակերպվում են</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>➤ Դպրոցում չկան «Տարվա լավագույնները» մրցույթին մասնակցած ուսուցիչներ</li> <li>➤ Կամավոր ատեստավորման և տարակարգի նկատմամբ անտարբերություն</li> <li>➤ Նոր ՀՊԶ-ով աշխատելիս ունենում են դժվարություններ և մեթոդական օգնության կարիք</li> <li>➤ ՏՀՏ գործիքակազմի օգտագործման ցածր մակարդակի հմտություններ որոշ ուսուցիչների կողմից /հիմնականում տարեց/</li> <li>➤ Որոշ ուսուցիչների մոտ նկատվում է նախաձեռնողականության պակաս</li> <li>➤ Խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացման կարիք, անդամների իրավագիտակցության, հավասար մասնակցության, սոցիալական</li> </ul>

տարաբնույթ միջոցառումներ,  
ուսումնական վարժանքներ,  
ռազմահայրենասիրական  
միջոցառումներ, բաց դասեր

պատասխանատվության


ապահովման անհրաժեշտություն:

- Ֆինանսական լրացուցիչ միջոցների ներգրավման անհրաժեշտություն
  - Սովորողների սովորելու մոտիվացիայի բարձրացման աշխատունակության խթանման կարիք
  - Իմբակների թվաքանակի ավելացման անհրաժեշտություն
- Նախագծային աշխատանքների արդյունավետ պլանավորում և իրականացում

***3. Համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ հաստատության համագործակցության ուժեղ և թույլ կողմերը***

«Արփունք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը ակտիվ համագործակցում է ՏԻՄ-ի հետ, արվում է ամեն ինչ համայնքի հետ համագործակցելու երկուստեք նախագծեր և միջոցառումներ իրականացնելու համար: Ուսումնադաստիարակչական գործընթացները ավելի արդյունավետ կազմակերպելու համար դպրոցի զարգացման ծրագրի իրականացման հիմնախնդրի լուծմանը նպաստող պայման է համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների և այլ մարմինների հետ, որը կրում է շարունակական բնույթ: Համայնքը առավել պասիվ է, այստեղ դպրոցը հանդես է գալիս որպես ավելի համախմբող և համայնքի ուժը կենտրոնացնող օղակ: Դպրոցի դերը համայնքում առավել կարևորելու և սոցիալական ակտիվ աշխատանքներ իրականացնելու նպատակով պետք է կատարենք համակողմանի աշխատանք: Հիմնախնդրի լուծումներից մեկը կարող են լինել սովորողների կողմից իրականացվող ուսումնական նախագծերը, որոնք իրենց հերթին ժամանակի ընթացքում կամրապնդեն համայնք-դպրոց համագործակցությունը: Դպրոցում աշխատանքներ են տարվում բոլոր շահառու խմբերի կարիքների բավարարման համար: Իրականացվում են առանձին միջոցառումներ, իրազեկման աշխատանքներ, կարիքների գնահատում: Համայնքի հետ մեկտեղ իրականացվում են համայնքային նշանակության և սպորտային միջոցառումներ, նշվում են պետական և ազգային տոներ: Ուսումնական նախագծերի շրջանակներում վարվում են հարցազրույցներ, անցկացվում են սոցիալական հարցումներ համայնքի բնակիչների շրջանում: Դպրոցը համագործակցում է կրթության կառավարման մարմնի պետական և մասնավոր շահառու կազմակերպությունների հետ: Դպրոցը ունի համագործայցության լայն շրջանակ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության վարչության, ԿԳՄՄՆ-ի, ԿՏԱԿ-ի, ԳԹԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԿԶՆԱԿ հիմնադրամի, մենթոր դպրոցների, վերապատրաստող կազմակերպությունների, Վորլդ Վիժնի, Ջինիշյան հիշատակի հիմնադրամի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ԱՌՆԱՊ-ի, Գեղարքունիքի ՏՄԱԿ-ի, ՀՀ իրավապահ մարմինների, ՀՀ ՊՆ զորամասերի, Սոցիալական աջակցության կենտրոնների և այլնի հետ:





«Արփունք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը կառավարման մարմինը՝ խորհուրդը, ձևավորվել է 2024 թվականին և գործում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանված կարգով: Խորհրդի նիստերին հաստատության տնօրենը մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով, սահմանված կարգով արձանագրվում են նիստերը: Խորհրդի աշխատանքները կազմակերպում է խորհրդի նախագահը՝ խորհրդի մնացած անդամների և հաստատության տնօրենի աջակցությամբ: Խորհրդի գործունեությունը նպատակաուղղված է դպրոցի զարգացմանը, առաջընթացին, միտված է՝

- ❖ Վերահսկելու ԴԶԾ-ում ամրագրված տարեկան գործողությունների իրականացումը,
- ❖ Աջակցելու ԴԶԾ-կատարմանը,
- ❖ Հաստատելու դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները,
- ❖ Դիտարկելու ԴԶԾ-ի կատարման ամենամյա հաշվետվությունը, եզրակացություններ տալու

*Դպրոցում 2024 թվականին ձևավորվել է վեց դպրոցների համար 15 անդամից բաղկացած միացյալ կոլեգյալ կառավարման մարմին՝ խորհուրդ հետևյալ կազմով*

Հ/հ	Անուն, ազգանուն	Կրթություն	Որ կազմակերպությունն է ներկայացնում
1.	Դավիթ Սահակյան	բարձրագույն	Վերադաս
2.	Գևորգ Գապոյան	բարձրագույն	ԿԳՄՄԼ
3.	Սարգիս Ներսիսյան	միջնակարգ	ՏԻՄ
4.	Քնքուշ Կիրակոսյան	բարձրագույն	Արվուների մ/խ
5.	Աշխեն Մխիթարյան	միջնակարգ	Արվուների ծ/խ
6.	Արշակ Սարիբեգյան	բարձրագույն	Փամբակ-Դարանակի մ/խ
7.	Հասմիկ Ավետիսյան	միջին մասնագիտական	Փամբակ-Դարանակի ծ/խ
8.	Արմեն բաղեյան	բարձրագույն	Արեգունու մ/խ
9.	Լորենա Հակոբյան	միջին մասնագիտական	Արեգունու ծ/խ
10.	Դավիթ Շահնազարյան	բարձրագույն	Գեղամասարի մ/խ
11.	Ռուսաննա Ներսիսյան	միջնակարգ	Գեղամասարի ծ/խ
12.	Յուլյա Գալստյան	բարձրագույն	Ավագանի մ/խ
13.	Մարուս Միմոնյան	հիմնական	Ավագանի ծ/խ
14.	Դավիթ Գալստյան	բարձրագույն	Նորակերտի մ/խ
15.	Ադելինա Հակոբյան	բարձրագույն	Նորակերտի ծ/խ

Այժմ անդրադառնանք համայնքի, կրթության կառավարման մարմինների շահառու կազմակերպությունների հետ հաստատության համագործակցության ուժեղ և թույլ կողմերին:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ul style="list-style-type: none"> <li>➤ Համայնքը ուսումնական հաստատության հետ գտնվում է մշտական կապի և</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>➤ Համայնքը չի աջակցում արտադպրոցական միջոցառումներին /տրանսպորտային</li> </ul>

<p>համագործակցության մեջ /                  շաբաթօրյակներ, փառատոներ,                  սպորտային միջոցառումներ/</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ Դպրոցը համայնքի հետ համատեղ լուծում է ԼՂ-ից տեղահանված սովորողների և նրանց ծնողների խնդիրները</li> <li>➤ Գեղամա աշխարհ և Կրթություն շաբաթաթերթերի համագործակցություն</li> <li>➤ Ոլորտի կառավարման մարմինների՝ ԿՏԱԿ-ի, ԳԹԿ-ի, ԿԶՆԱԿ հիմնադրամ, ՄԱԿ-ի պարենի ծրագիր, հարակից դպրոցներ, Գեղարքունիքի ՏՄԱԿ-ի հետ</li> <li>➤ ԿԶՆԱԿ-ի կողմից ուսուցիչների, տնօրենի և տեղակալների վերապատրաստում                         <ul style="list-style-type: none"> <li>➤ ԿՏԱԿ-ի հետ ԴԿՏՀ և ԿԿՏՀ համակարգերի վարում</li> </ul> </li> <li>➤ ԿԳՄՄՆ-դպրոց համագործակցության արդյունքում սովորողները անվճար հաճախում են թատրոններ, թանգարաններ ՏՄԱԿ-ի բազմամասնագիտական խումբը խորհրդատվական հանդիպումներ է անցկացնում դպրոցի մանկավարժների հետ</li> <li>➤ Դպրոցի ուսուցչի օգնականը և</li> </ul>	<p>ծախսեր և այլն/</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ Համայնքի հետ համագործակցային հարաբերություններում դպրոցն ավելի շահագրիռ է քան համայնքը</li> <li>➤ Շահառու կազմակերպությունների թիվը կարիք ունի համալրման</li> <li>➤ Ծնողական խորհուրդը ակտիվ չէ, ոմանք ունեն անտարբեր վերաբերմունք</li> </ul>
--	--

<p>հոգեբանը մասնակցում են ՏՄԱԿ-ի կողմից անցկացվող վերապատրաստումներին</p> <ul style="list-style-type: none"><li>➤ Խորհրդի անդամները պատրաստակամ են և նախաձեռնող:</li><li>➤ Կառավարման խորհրդի նիստերը գումարվում են սահմանված ժամկետներում:<ul style="list-style-type: none"><li>➤ Կառավարման խորհրդի համագործակցությունը ակտիվ է, թափանցիկ և հաշվետու:</li><li>➤ Կառավարման խորհրդի բոլոր անդամները անցել են ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված կոլեգյալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամների վերապատրաստմանը</li></ul></li></ul>	<ul style="list-style-type: none"><li>➤ Խորհրդի որոշ անդամներ քննարկվող հարցերին ունենում են պասիվ մասնակցություն</li></ul>
---	---

#### ***4. Հաստատության խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերը***

Հանրակրթական դպրոցի կրթական գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու, համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար ձևավակորում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ:

«Արփունք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհուրդը ձևավորվում է մանկավարժական կոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում մեկ տարի ժամկետով: Նիստը վարում է հաստատության տնօրենը: Նա ի պաշտոնե հանդիսանում խորհրդի նախագահը: Նիստերը արձանագրվում են սահմանված կարգով: Մանկավարժական խորհուրդը քննարկում և որոշումներ է կայացնում օրենքով սահմանված կարգով իր լիազորությունների շրջանակներում: Մանկավարժական աշխատողների ընդհանուր թիվը 18, բոլորն ունեն բարձրագույն կրթություն և անցել են պարտադիր ատեստավորում համապատասխան առարկաններից: Նրանցից հինգը աշխատում են համատեղությամբ: Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը 17 ժամ է:

Առարկայական մեթոդական միավորումները հարակից առարկաներից ձևավորված առարկայակն խմբեր են որոնք նպաստում են ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը համակարգելով մեթոդական աշխատանքը դպրոցում: Նիստերը գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Մեթոդական միավորումները իրականացնում են հետևյալ աշխատանքները՝

- ❖ Նպաստում են ուսուցիչների մասնագիտական որակների զարգացմանը
- ❖ Քննարկում են մեթոդամանկավարժական, ուսումնադաստիարակչական հարցեր
- ❖ Նախապատրաստում են արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներին
- ❖ Քննարկում են ՀՊԶ-ներին համապատասխան դասի պլանավորումները

- ❖ Կազմում են ուսումնական, թեմատիկ պլաններ, օրվա դասի պլաններ
- ❖ Իրականացնում են փոխադարձ դասալսումներ, քննարկում արդյունքները
- ❖ Ուսումնասիրում են կրթության վերաբերյալ նորմատիվային և մեթոդական փաստաթղթեր
- ❖ Մշտադիտարկում են առարկաների դասավանդման վիճակը, նախապատրաստում ներքին գնահատմանը
- ❖ Իրականացնում են ուսուցման մեթոդների վերլուծություն և այլն:

Դպրոցում գործում է երեք միավորումներ՝ *տարրական, հումանիտար, ընդհանուր*:

Դպրոցի աշակերտական խորհուրդը ունի յոթ անդամ: Աշակերտական խորհուրդը աշակերտների ինքնավարման և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմին է: Իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է հաստատության կառավարմանը, ուսումնական գործընթացին, հանդես է գալիս առաջարկություններով և նախաձեռնություններով: Սակայն խորհուրդը չունի ակտիվ մասնակցություն ներդպրոցական կյանքին և դպրոցի կառավարմանը: Կարիք կա աշակերտական խորհուրդի անդամների և բոլոր սովորողների իրազեկվածության մակարդակի բարձրացման, ինչի արդյունքում կունենանք ակտիվ և մասնակցային միջավայրի ապահովում:

«Արփունք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը կարևորում է ծնողական համայնք-դպրոց համագործակցության շարունակականության ապահովումը: Ծնողական խորհուրդի աշխատանքները կազմակերպվում են ծնողական ժողովների միջոցով՝ համաձայն դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանին: Լինում են դասարանական և համադպրոցական ժողովներ: Ծնողական խորհուրդի գործընթացը վերահսկվում է հաստատության տնօրենի դաստիարակչական աշխատանքի գծով տեղակալը: Ծնողական խորհուրդն ունի 10 անդամ:

Ծնողական համայնքի ներգրավվածությունը սեփական երեխայի ուսումնառության գործընթացին կարևոր հանգամանք է թե՛ դպրոցի, թե՛ սովորողի, թե՛ ծնողի համար: Սովորողի ուսումնառությանը ծնողի ներգրավվածությանը ապահովում է առաջադիմություն, հետևողականություն, կարգապահության խթանում: Համագործակցության արդյունքում ծնողն իր հերթին ձեռք է բերում ծնողավարական լրացուցիչ հմտություններ, իրազեկ է դառնում

սեփական երեխայի ուսումնառության գործընթացից: Համագործակցության արդյունքում շահում են նշված երեք մասնակիցները՝ դպրոցը, ծնողը և սովորողը, ուստի նրանցից յուրաքանչյուր իր հերթին պետք է ընդառաջի փոխվստահության և համագործակցային մթնոլորտի ստեղծմանը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ul style="list-style-type: none"> <li>➤ Մանկավարժական խորհուրդը բաղկացած է 18 մանկավարժներից, բոլորը ունեն բարձրագույն կրթություն, մանկավարժներից 5-ը համատեղությամբ աշխատողներ են:</li> <li>➤ Մանկավարժական խորհրդի բոլոր անդամները մասնակցում են խորհրդի նիստերին</li> <li>➤ Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են սահմանված կարգով՝ քննարկելով օրակարգային հարցերը ընդունելով համապատասխան որոշումներ իր լիազորության շրջանակներում</li> <li>➤ Մեթոդական միավորման նիստերը իրականացվում են սահմանված կարգով և արձանագրվում</li> <li>➤ Աշակերտական խորհուրդը ակտիվ է, իրենց իրավասիքության շրջանակներում հանդես են գալիս նախաձեռնություններով և</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>➤ Մանկավարժական խորհրդի ոչ բոլոր անդամներն են նախաձեռնող, կա անտարբեր վերաբերմունք</li> <li>➤ Մեթոդական միավորման աշխատանքներին ուսուցիչների մասնակցությունը պասիվ է</li> <li>➤ Համարձակ գործելու և ինքնավստահության կարողությունների</li> </ul>

առաջարկություններով, ներգրավված են	սակավություն
<p>տարատեսակ միջոցառումներում</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ Աշակերտական խորհրդի որոշ անդամներ ունեն մեծ ոգեվորություն, սակայն ռեսուրսների անբավարարության պատճառով շատ նախագծեր չեն իրականացնում</li> <li>➤ Ծնողական խորհուրդը ներգրավված է դպրոցի ուսումնադաստիարակչական, արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում</li> <li>➤ Կա սերտ համագործակցություն դպրոցի, աշակերտական խորհրդի և ծնողների միջև, կան ակտիվ, պատասխանատու, համագործակցող ծնողներ</li> <li>➤ Հաճախակի են կազմակերպվում ճանաչողական այցեր և էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ՝ օգտագործելով նաև ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից տրամադրված բաժանորդային քարտերը.</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>➤ Ծնողական խորհրդի կողմից ծնողների հետ տարվող աշխատանքները բավարար չեն՝ սովորողների հաճախումների, ուշացումների, վարքագծային շտկումների ուղղությամբ</li> <li>➤ Պասիվ են ծնողները դպրոցական միջոցառումներում ներգրավելու աշխատանքում, ոմանք ունեն անտարբեր վերաբերմունք</li> <li>➤ Ունենք պասիվ, չհամագործակցող ծնողներ</li> <li>➤ Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ, շրջանավարտների խորհուրդ</li> </ul>



**5. Հաստատության շենքային պայմանների նպատակային գործածությունը ուժեղ կողմերը և թերությունները**

Որակյալ, հասանելի ուսումնական միջավայր ունենալը հանրակրթական համակարգի գերինդիքն է: Այդպիսի ուսումնական միջավայրի ապահովումը անհնար է իրականացնել դպրոցում, որն ունի ուսումնաօժանդակ միջոցների, ենթակառուցվածքների, նյութատեխնիկական միջոցների, հարմարավետ աշակերտական գույքի կարիք: Հարմարավետ, անվտանգ, գեղեցիկ, բարեկարգ շենքային պայմանների առկայությունը կարևոր նախապայման է լավ կրթական համակարգ ունենալու համար: Ենթակառուցվածքների տեսանյունից առաջնային կարիք կարելի է համարել ռեսուրս սենյակի հիմնումը, ԿԱՊԿՈՒ սովորողների համար ուսումնական անվտանգ, ապահով, հարմար և հասանելի միջավայրի ապահովումը: Կարևոր է նաև մարզադահլիճի առկայությունը: Գարնանը և աշնանը ֆիզիկական կուլտուրայի դասերը անց են կացվում մարզահրապարակում, որը ևս անբարեկարգ է:

Դպրոցի ներկայիս ենթակառուցվածքներն են՝

<i>Հ/հ</i>	<i>Կրթական ծրագրերի իրականացման համար առկա սենյակներ</i>	<i>Քանակը</i>	<i>Մակերեսը</i>
1.	Դասասենյակ	10	306 մ <sup>2</sup>
2.	Լաբորոտորիա	1	12,8 մ <sup>2</sup>
3.	Ուսուցչանոց	1	46,4 մ <sup>2</sup>
4.	Ճաշարան	1	81,4 մ <sup>2</sup>
5.	Խոհանոց	1	29,6 մ <sup>2</sup>
6.	Հանդիսությունների դահլիճ	1	60,6 մ <sup>2</sup>
7.	Գրադարան	1	20,25 մ <sup>2</sup>
8.	Սանհանգույց	2	Դրսում հորատիպ
9.	ՆԶՊ կաբինետ	1	33,0 մ <sup>2</sup>

**Տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդ՝ Նելա Վլադիմիրի Վարդանյան**

<b>10.</b>	<b>Զենքի պահեստ</b>	<b>1</b>	<b>12,8 մ<sup>2</sup></b>
<b>11.</b>	<b>Շախմատի դասասենյակ</b>	<b>1</b>	<b>33,0 մ<sup>2</sup></b>
<b>12.</b>	<b>Համակարգչային դասասենյակ</b>	<b>1</b>	<b>31,1 մ<sup>2</sup></b>
<b>13.</b>	<b>Նախակրթարան</b>	<b>1</b>	<b>30,8 մ<sup>2</sup></b>
<b>14.</b>	<b>Կաթսայատուն</b>	<b>1</b>	<b>29,6 մ<sup>2</sup></b>

Որակյալ կրթություն ապահովելու կարևորագույն բաղադրիչներից է նյութատեխնիկական բազան: Այս ռեսուրսի բացակայությունը կամ անբավարարությունը առաջացնում են ռիսկեր՝ որակյալ կրթություն տրամադրելու տեսանկյունից: Սա ևս հիմնախնդիր է և պահանջում է համակարգային լուծում, այն վերաբերվում է բոլոր առարկաներին: ԲՏ&Մ առարկաների համար նախատեսված սարքերի և նյութերի անբավարար քանակը խաթարում է ուսումնական պրոցեսը: Կարևոր և հրատապ լուծում պահանջող հիմնահարց է նյութատեխնիկական բազայի թարմացումն ու հարստացումը: Նորակառույց դպրոցում կունենանք արդի պահանջներին համապատասխան շենքային պայմաններ և հարուստ նյութատեխնիկական բազա:

Ներկայիս մեր ունեցած շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան այսպիսին է.

<b>ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ</b>	<b>ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ</b>
